


Մոտակա դրամական ռեֆորմի հետեւանքներից ազգաբնակչության շահերը պաշտպանելու նպատակով, «ՄԵՐԿՈՒՐԻ» ձեռնարկությունը երկու շաբաթով հայտարարում է 1961-1992 թթ. թողարկման թղթադրամների ընդունում 6 ամիս ժամկետով, որի դիմաց առաջարկում է 105%:

Փաստորեն Ձեզ հնարավորություն է ընձեռվում ոչ միայն կրկնապատկել Ձեր կարողությունը, այլեւ, փոխել Ձեր տրամադրության տակ գտնվող հին թողարկման թղթադրամները նորերով:

Mercury ENTERPRISE

Երեւան, Սայաթ Նովա 19, «Անի» հյուրանոց, 6-րդ հարկ, 636 սենյակ հեռ. 59-46-36


Լուրերի Հոսք

## Տաջիկստանում կործանվել է ՅԱԿ-40 ինքնաթիռը

Շաբաթ օրը Լեռնային Բադախշանի վարչական կենտրոն Խորոգի օդանավակայանից թռիչք կատարելու ժամանակ կործանվել է Տաջիկստանի պետական ավիաընկերության ՅԱԿ-40 ինքնաթիռը, որը չվերթ էր կատարում Խորոգ-Դուշանբե ուղերթով: Այդ մասին ԻԹԱՌ-ին հայտնել է Տաջիկստանի Գերագույն խորհրդի նախագահի խորհրդական Դավլյատովը: Ըստ նախնական տվյալների, զոհվել է 35 հոգի, ընդ որում 2 օդաչու եւ ուղեկցորդուհին: Կենդանի է մնացել 4 ուղեւոր: Վթարի վայր է մեկնել կառավարական հանձնաժողովը: ԻԹ

## Ուզբեկստանի միջազգային օդանավակայանին 500 միլիոն դոլլար

Ուզբեկստանի Նախարարների կաբինետը որոշում ընդունեց Տաշքենդի մոտակայքում միջազգային օդանավակայան կառուցելու մասին: Դրա առաջին հերթի կառուցմանը հատկացվել է 500 միլիոն ամերիկյան դոլլար: Օդանավակայանը տարեկան կսպասարկի մինչեւ 10 միլիոն ուղեւորների: Համալիրը կունենա երկու թռիչքադաշտ: Ենթադրվում է այն հանդերձավորել ամենաարդիական սարքավորումներով, որոնք կապահովեն սպասարկման բարձր մակարդակ: ԻԹ

## Շեյխն արդարացվել է

Ռազմատունչ իսլամ կղերական շեյխ Օմար Աբդել Ռահմանին արդարացվել է այն մեղադրանքներից, թե ինքն է ղեկավարել Նյու Յորքի համաշխարհային կենտրոնի ահաբեկչության եւ մի շարք այլ տեղերում ահաբեկչության պլանավորման մեջ: Նրա եւ 14 հետեւորդների դեմ նույն մեղադրանքն էր ներկայացվել Նյու Յորքի ֆեդերալ դատարանում գործի քննության ժամանակ:

## «Էփլի» նոր տպիչը փոքր բիզնեսի համար

«Էփլ կոմպյուտեր ինկ»-ը վաճառքի է հանել նոր տպիչ: «Էփլ պերսոնալ լազերռայթեր 300»-ի գինը 690 դոլլար է: Քաշը 15 ֆունտից կլ թեթեւ, րոպեում տպում է 4 տպված թերթ, թույլատրող հնարավորությունը 300/300 կետ դյույմի վրա: Տպիչը նախատեսված է տնային օֆիսներում, փոքր բիզնեսում եւ դպրոցներում օգտագործելու համար:

ԷԿՈ-ՊՐԵՍ

## Համաճարակներ Ռուսաստանում

Օգոստոսի 16-ի դրությամբ ՌԴ Ռոստովի մարզի Վոլգոդոնսկ քաղաքում որովայնային տիֆի կասկածով հիվանդանոց է տեղափոխվել 339 մարդ, այդ թվում 116 երեխա: 213-ի (73-ը երեխա) ախտորոշումը հաստատվել է: Իսկ Սախալինի մարզում տարվա սկզբից գրանցվել է դիֆտերիայի 7 դեպք, ինչպես նաեւ 78 մանրէակիր: Հիվանդներից մեկը մահացել է: Հիվանդության աճը մասնագետները կապում են այն բանի հետ, որ պատվաստումները լրիվ չեն կատարվել: Վերջերս մարզում հայտնվել են նաեւ այնպիսի մոռացված հիվանդություններ, ինչպես կարմրուկը եւ կապույտ հազը:

Սնարք

Հիմնադիր եւ հրատարակիչ՝
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ

Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635

Խմբագիր
ՀԱՄԼԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ / 581841

Տնօրէն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / 562863

Apple® Macintosh®
համակարգչային սարքավորմամբ
«Ազգ» թերթի

Azg
armenian daily

Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Թերթի ձեւավորումն եւ [illegible]
[illegible]

digitised by A.R.A.R.@